ւատս քրիստոնէութեան իւրոյ · ընդ այս եւս Մէլիք Ատիլ ոչ հաճեցաւ · և 'ի չյաջողիլ հաշտութեան, վերատին դիմեցին 'ի զէն։

Սուլթանն նստէր յԵրուսաղէմ 'ի տունն Ագսա կոչեցեալ՝ մերձ յեկեղեցին Ս · Յարութեան, ակն ունելով գալստեան Եգիպտական զօրաց, և մեծաւ ջանիւք փոյթ կալեալ էր չինել զպարիսպ քաղաքին · ընդ այս գործ առաքեալ էր յառաջագոյն տէրն Մուսուլայ քարահատս և գործաւորս իւրովք թոչակօք, յոր աշխատէին նոքա ամիսս իբրեւ 6 · ապա կացոյց 'ի գերեաց Լատինաց զարս իբրեւ 2000 'ի ծառայութիւն այսր գործոյ, և նորոգեցին զմարտկոցս 'ի հիւսիսային դրանէ մինչեւ 'ի դուռն արեւմտեան · զի զհատեալ քարինս 'ի խրամէ անտի դնէին 'ի պարիսպն։ Սուլթանն փութացուցանէր զգործն ստիպաւ մեծաւ հանել 'ի գլուխ, որոյ վասն բաժանեաց զայն որդւոց, եղբարց և իշխանաց իւրոց · ինքն լեալ անձամբ վերակացու, բառնալով զքարինս 'ի թամբս երիվարի իւրոյ, և եհան զամենայն բազմութիւնս քաղաքին 'ի մեծամեծաց մինչեւ ցփոքունս և առ հասարակ վաստակէին 'ի գործ շինութեան պարսպին · իսկ թագաւորն Անգղիոյ թէպէտ եւ գնացեալ էր յԱկռոն և ձեռնարկեալ նորոգել զպարիսպ նորա, սակայն իշխանք Խաչակրաց ստիպէին զնա յաջողութիւն Ս · Գերեզմանին, և նա առ 'ի կատարել զխոստումն իւր, դարձ արար անտի։ Եւ 'ի սին ժամանակի մեռաւ Մարքիզն Տիւրոսի, եւ տիրեաց քաղաքին Ռիգարտոս, եւ խնդրեաց 'ի Սուլթանէն զկէս մասն երկրին, Երուսաղէմ և ամրոցն մնալ 'ի ձեռս այլազգեաց, բաց 'ի տաճարէն Ս · Յարութեան։ Եւ 'ի չառնուլ յանձն Սուլթանին, արշաւեցին նոքա 'ի սահմանս Եգիպտոսի, առին զբերդն Տարում, և 'ի սուր հանին զբնակիչս նորին, եւ դարձան անտի ճոխ աւարաւ 'ի վերայ Մեճտելայ, բայց յետս վանեցան յամրականաց, և ոմանք մեռան իսկ, և անտի դնացին ոմանք յԱկռոն և այլք 'ի Պէյթ Ճիպրիլ, և յետոյ ժողովեալ հասին 'ի Պէյթ Նուպէ, եւ անտի 'ի Գոլոնիա՝ որ հեռի է յԵրուսաղէմի 2 փարսախաւ։ Առիւծասիրան Ռիգարտոս, որոյ յանուանէ իսկ սարսէին Արաբացիք, և այնպէս հաչակեալ էր համբաւ քաջութեան նորա, մինչ զի զկնի մահուան նորին յոստանուլ